Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի 2019թ.
դեկտեմբերի 7-ի թիվ 11 նիստում
Ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան
«07» դեկտեմբերի 2019թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ

(փոփոխություններով)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ ԳՊՀ կամ Համալսարան) դասավանդման որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման (այսուհետ՝ ուսանողական հարցման) կանոնակարգը սահմանում է ԳՊՀ ուսանողների կողմից Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և ուսուցման գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության գնահատման նպատակով հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:

1.2. Ուսանողական հարցումն անցկացվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 4-րդ մասի և ԳՊՀ կանոնադրության 115-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների հիման վրա և համարվում է ԳՊՀ ուսանողների ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և պրոֆեսորադասախոսական ու վարչական անձնակազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի իրականացման ձև:

1.3. Ուսանողական հարցման կանոնակարգը հաստատում և դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարում է ԳՊՀ գիտական խորհուրդը:

2. Ուսանողական հարցման անցկացումը

2.1. Ուսանողական հարցումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի ավարտին:

Ավարտական կուրսերում 2-րդ կիսամյակի վերաբերյալ հարցումն իրականացվում է մինչև քննաշրջանը:

2.2. Ուսանողական հարցումն իրականացվում է Համալսարանի Որակի ապահովման բաժնի, ամբիոնների կողմից՝ դեկանատների օժանդակությամբ:

2.3. Ուսանողական հարցումն իրականացվում է Որակի ապահովման բաժնի, համապատասխան դեկանատների կողմից մշակված հարցաթերթիկներով:

2.4. Ուսանողական հարցումն անանուն է:

2.5. Ուսանողական հարցումն անցկացվում է կուրսի (խմբի) ուսանողների երկու երրորդի մասնակցության դեպքում:

2.6. Հարցումն անցկացվում է կա՛մ էլեկտրոնային, կա՛մ թղթային տարբերակով (Հավելված 1,

2):

3. Ուսանողական հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

3.1 Ուսանողական հարցման արդյունքները մշակվում և վերլուծվում են Համալսարանի Որակի ապահովման բաժնի, ամբիոնների, դեկանատների և Ակադեմիական քաղաքականության բաժնի կողմից, արվում են համապատասխան եզրահանգումներ:

Հարցաթերթում գնահատականների ուղղումները չեն հաշվարկվում:

3.3. Գնահատման հարցաթերթերը պահվում են Որակի ապահովման բաժնում բակալավրիատի համար՝ 4, մագիստրատուրայի համար՝ 2 տարի, իսկ ասպիրանտուրայի համար՝ 3 տարի:

4. Ուսանողական հարցման արդյունքների օգտագործումը

4.1. Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոններում, այնուհետև՝ ֆակուլտետի խորհրդի, ռեկտորատի, գիտական խորհրդի նիստերում: Քննարկման արդյունքում ներկայացվում են համապատասխան առաջարկություններ, կատարվում եզրահանգումներ, որոնք հաշվառվում են դասախոսների մասնագիտական, մանկավարժական, մեթոդական կարողությունների և հմտությունների զարգացման գործընթացում:

4.2.Ուսանողների գրավոր կարծիքները քննարկվում են դեկանատի, ապա ռեկտորատի նիստերում:

4.3. Դասախոսն իրավունք ունի Որակի ապահովման բաժնում ծանոթանալու հարցման՝ իրեն վերաբերող կարծիքներին և գրառումներ անելու դրանցից:

4.4. Ուսանողական հարցման արդյունքներն օգտագործվում են դասախոսի՝ հավակնած պաշտոնում ընտրվելու և առաջխաղացման գործընթացներում, ինչպես նաև նյութական ու բարոյական խրախուսման նպատակով: